87. ՀՐԵՂԵՆ ՇԻՆ

Ըլում ա չի ըլում մի մարթ։ Տրան ըլում ա իրեք տղա։ Մի օր էտ մարթը իրա տղերանցը վեր ա ունում քյընում հեռու տեղ, մի տուի ա վարում, արտ անում։

Ժամանակ ա անցկենում, արտը վեր լավ մծանում ա, մի ծի կյալիս ա հինչքան չի ուտում, էնքան կոխ ա տալի։ Հերը մեռ տղին ասում ա. «Քյընա էս քշեր դարաուլ բրա, ծին վեր կյա, կըփրոնես, կընստես, կըպիրես»։

Մեծ տղեն քյընում ա արտը։ Քշերվա մի թուշումը քունը տանում ա, բուն ա ըլում։ Ըռավետը վեր ա կենում, տեսնում ծին եկել ա արտը կերել, քյընացել։ Կյալիս ա տուն։ Էս անքամ հերը միչնակ աղին ա ըղարկում։ Էս տղեն կյալիս ա արտի կուշտը, էլի ընավ ա հնցնում, ծին կյալիս ա արտը, ուտում հու քյընում։ Հերը կանչում ա կուճուր տղին, ըղարկում արտը։ Էս տղեն կյալիս ա արտը։ Քշերվա մի թուշում, վեր տեսնում ա քունը իրան յախտում ա, մատը կտրում ա, աղ անում, վեր ցավիցը քունը չըտանի։

Մի վախտ տեսնում ա մի թունդ քամի վեր կըցավ։ Էտ քամի հետ մի ծի եկավ, մտավ արտը, ըսկսեց ուտիլը։ Տղեն իրան չի կուրցնում։ Մեռքի քանդիրը հաղլա յա անում, քցում ծիին ճիտը, փոնում։ Ծին լուզու ա առնում, ասում. «Ա՛յ տղա, ինձ հո՞ւր ես տանում, արի տու ինձ պաց թող, հինչ ուզես, կանեմ։ Քու ուզածտ

արտը չի՛. խոսք եմ տալի սրանից ետը վետս ըստեղ չըտնեմ։ Պա՛ն ա, եթե նեղ տեղ ընգնես, ինձ կըկանչես. «Հրեղեն ծի՛, արի՛», կըկյամ»։ Տղեն ասում ա. «Լա՛վ, թող քու ասածը ըլի», ու ծին պա՛ց ա թողում, կյա՛լիս տուն։

Հերը վեր լսում ա տղեն ծին փոնել ա հու պա՛ց թողել, նեղանում ա, թքըմուր տալի։ Բայց հի՞նչ։ էտ օրվանից ղո՛ւղ վեր արտը էլ ծին կոխ չի տալիս, չի փչացնում։

Մի քանի վախտ ա անցկենում, էտ երգրի թաքավերը ղոնախլըղ ա սարքում, կանչում իրա տերության մեչ ապրող շահիլներին, վեր տեսնա՝ իրան ախճիկը վերի՞ն ա հավան կենում։ Խա՛բարը կյա՛լիս ա հսնում ըրտատեր մարթի տղերանցը։ Մեծն ու միչնակը վեր են կենում, քյընում, կո՛ւճուրին տանում չեն, ասում են. «Տու հլա կուճուր ես, թաքավերի փեսա տառնալը քու խորագը չի»։

Հենց վեր էս տղեքը քյընում են, տրա՛նց ետնիցը էտ կուճուր տղեն քյընում ա իրանց արտը, կաղնում, կանչում. «Հրեղե՛ն ծի, հրեղե՛ն ծի, ինձ հսի, տեղս նեղ ա»։ Հալա տղի խոսքը պըրա՛նումը մի բորան ա վեր կենում։ Տղեն յա՛շում ա տենում էտ բորանի հետ ծին եկավ։ Նստում ա քշում, կյա՛լիս թաքավերի պալատի կուշտը։

Թաքավերը ըխճկանը կըղնըցնում ա պալատի ամենապա՛ցը ըլկոնումը հու ասում. «Հով իրա ծիով թռչի, ըխճկա մատի մտանին հանի, իմ փեսեն ա»։ Հվաքված շահիլնիքը իրարով են ընգնում։ Մինը ընգնում ա ճարթ ու փշուր ըլում, մնի վետն ա կոտրում, մնի՝ ծեռքը, մնի կըլոխն ա տապակ ըլում։ Վերչը նոբաթը հըսնում ա էս կուճուր տղին։ Սա իրա ծին քշում ա, թռչում հսնում ըխճկանը, ամմա չի կարում մտանին հանի։

Ըրա՛գունը էս ըրտատեր մարթի էրկու տղեն տուն են կյա՛լիս, տեսնում իրանց կո՛ւճուր ախպերը տանը։ Սրա՛ն պատմում են, վեր սհե-սհե մի տղա եկավ, ծին քշեց, հսավ թաքավորի ըխճկանը, ամմա չկարաց մտանին հանի։ էս կուճուր տղեն սուս ու փուս լսում ա, քթի տակին ծիծաղում։

Էքսի օրը էս էրկու ախպերը նորից են քյընում թաքավերի ըխճկա մատանին հնիլի։ Տրա՛նց ետնիցը կո՛ւճուր ախպերը տնից տուս ա կյա՛լիս, քյընում արտը, հրեղեն ծիին կանչում։ Ծեռաց ծին կյա՛լիս ա։ էս տղեն շորերը փոխում ա, ծին նստում, կյա՛լիս պալատի կողքը, տեսնում, վեր ըտեղ հաղարավեր շահիլնի իրանց օժն են փորցում, բայց հի՞նչ։ Մինը ընգնում ա, ճարթ ու փշուր ըլում, մնի վետն ա կոտրում, մնի՝ ծեռքը, մնի կըլոխն ա տապակ ըլում։ Վերչը նոբաթը հսնում ա էս կուճուր տղին։ Սա ծիին ղամշի ա տալի, ծին տեղից պուկ ա կյա՛լիս, թռչում, հսնում բալկոնի

կուշտը։ Ըստեղ տղեն ծեռքը քցում ա ըխճկա մտանին հանում։ Ժողովուրթը ըրխացած հարայ ա կանչում։ Տղեն մտանին վեր կա-լած կյալիս ա իրանց արտը, ծին պաց թողում, էլ ետ կյալիս տուն։

Ըրուգունը ըխպերտինքը տուն են կյալիս, նստում պատմում են, հինչ վեր տեսել են։ Էս պուճուր ախպերը էլի պան չի ասում, քթի տակին ծրծաղում ա։

Էքսի օրը։ Թաքավերի հրամանով էտ երկրի բոլոր ջահիլնիքը հվաքվում են։ Էս կուճուր տղեն էլ ա կյալիս։ Թաքավերի ախճիկը բլկոնիցը քշանում ա էտ ջահիլների ըրեսներին յշիլով անցկենում, ուղում ա իրան մտանին հնողին ճնանչի։ Վերջը կյալիս ա, տես-նում մի բուրջում ճըղրտոտված շորերով մի տղա յա նստած. մատն էլ կապած։ Ասում ա. «Ա՛յ տղա, էտ խի՞ ես մատտ կապել»։ Տղեն պատասխանում ա. «Ցարա յա կապել եմ»։ Ախճիկը ասում ա. «Պաց ըրա մի տեսնամ, ես տրա տեղը գուգում եմ»։

Վերջը տղեն մատը պաց ա անում, Թաքավերի ըխճկա մտա-նի շափաղը մարթ ա քուռցնում։ Ախճիկը կանչում ա. «Հայրի՛կ, հայրի՛կ, եկ ըստեղ, իմ մտանին հանող տղին քթել եմ»։

Հերը կյալիս ա, էս տղին վեր են ունում, տանում պալատ։ Ցխտը օր, օխտը քըշեր հրսանիք են անում տրանց փսակում։

Նրանք հսան իրանց մուրագին, տուք էլ հսնեք ծեր մուրաղին։